

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

(առարկա)

ԹԵՄԱ՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը  
դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու  
միջոց

Կազմեց՝ Սոնա Եփրեմի Բաղդասարյան

(անուն, ազգանուն, հայրանուն)

<< Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
Գլուխ 1.....	6
1.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կրտսեր դպրոցում .....	6
1.2. Մուլտիմեդիան որպես ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիա.....	8
Գլուխ 2.....	12
2. 1 Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ՀՀ տարրական դպրոցում .....	12
2.2 ՏՀՏ-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները .....	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	34
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	<b>Error! Bookmark not defined.</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում կրթական քաղաքականության իրականացման գործում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Նոր տեխնոլոգիաների և ինտերնետի օգտագործումը զգալիորեն ընդլայնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները՝ որակական նոր բնույթ հաղորդելով ուսուցման կազմակերպմանը և ապահովելով ինքնակրթության ու շարունակական կրթության լայն հնարավորություն:

Համակարգիչը դպրոցում դիտարկվում է որպես ուսումնառության հիմնական միջոցներից մեկը: Կրթական նոր պահանջները բավարարելու համար դպրոցական լաբորատորիաները պետք է հարստացնել տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված սարքավորումներով:

S2S-ի օգտագործումը արդիական է , որակապես փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր:

Համակարգիչը դառնում է նաև դպրոցի կառավարման, ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների մասին տվյալների կուտակման, ծնողների հետ տարվող աշխատանքի և արտադասարանային գործունեության իրականացման գործիք:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները սերտորեն առնչվում են բոլոր առարկաների դասավանդմանը: Անհրաժեշտ է դառնում դպրոցներում ստեղծել էլեկտրոնային գրադարաններ:

Բոլորս տեսնում ենք, որ աշխարհը գնում է նրան, որ կրթությունը բոլորի համար և ողջ կյանքում ապահովի արդար, հավասար հնարավորություններ, ներառականություն, կրթության և ուսուցման որակը ի շահ կայուն զարգացման ու առանց բռնության միջավայրի ձևավորման: Թվային տեխնոլոգիաների տարածմամբ կրթությունը ստացավ շարունակական, անհատակողմնորոշիչ, ճկուն և դինամիկ ձև: Այսօր պետությունների առջև դրված է որակյալ կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար հասանելի

դարձնելու կարևորագույն խնդիրը: Այդ նպատակով փորձ է արվում ՏՀՏ-ն օգտագործել կրթության տարբեր բնագավառներում և բոլոր մակարդակներում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ թվային հասարակությունում ծնվել է մի նոր սերունդ, ով պետք է ոչ միայն տիրապետի ՏՀՏ-ի ստեղծած նոր գիտելիքներին, հասկացություններին, կոմպենտենցիաներին, այլև պետք է իմանա դրանցից կախված լինելու վտանգների և հետևանքների մասին:

Աշխատանքի նպատակն է ցույց տալ, որ բոլոր առարկաների դասավանդման ժամանակ, գործնական աշխատանքների համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը պարտադիր է և անհրաժեշտ:

Աշխատանքը բաղկացած է երկու գլխից, ենթագլխից, ներածություն, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ բաժիններից:

## Գլուխ 1

### 1.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կրտսեր դպրոցում

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ: Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել:

*«Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում»*

#### *Ակադեմիկոս Ա. Պ. Մեևոնովի*

Այս պնդումը պետք է որոշիչ լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում: Այդ նպատակների իրականացման համար դասվարի աշխատանքային գործունեության մեջ ՏՀՏ միջոցների կիրառումը անհրաժեշտություն է դառնում:

Կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների օգտագործման նպատակահարմարության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են տեսողական - պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատ, ինչպես նաև անալիզատորների անհավասար եւ ոչ բավարար զարգացումը, որոնց շնորհիվ են երեխաները ընկալում ինֆորմացիան՝ դրա հետագա մշակման համար: Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, ապա այն չի կարող հասկանալի, յուրացված լինել, չի կարող դառնալ անհատի սեփականությունը, նրա մշակույթի տարրը:

Այսօր SՀS –ների լայնածավալ կիրառումը իր տեղն է գտնում առաջին հերթին դասին: Կրտսեր դպրոցի ինֆորմատիզացիան կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Այստեղից էլ բխում են SՀS-ների օգտագործման նպատակները.

- բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/
- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը
- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը
- բարելավել դասի անցկացման մեթոդները
- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց
- արագ և որակյալ պատրաստվել դասին

## 1.2. Մուլտիմեդիան որպես ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիա

Մուլտիմեդիան ժամանակակից համակարգչային տեղեկատվական տեխնոլոգիա է, որն իր մեջ ներառում է տեքստը, ձայնը, վիդիոտեսագրությունը, գրաֆիկական պատկերն ու անիմացիան: Ծրագրային միջոցների և սարքավորումների միջոցով այն տեղեկատվություն է ապահովում, ինչը մարդուն թույլ է տալիս ընկալել այդ տեղեկատվությունը մի քանի զգայարանների միջոցով: Մուլտիմեդիա տեխնոլոգիաների ստեղծումը հեղափոխություն կատարեց մասնագիտական գործունեության մի շարք ոլորտներում: Կրթության ոլորտում մուլտիմեդիան լուծում է շատ կարևոր և արդիական հարց՝ կրթությունը, ուսուցումը դարձնում է հետաքրքիր և հաճելի: Այն նպաստում է 21-րդ դարում անհրաժեշտ սովորողների կարևորագույն հմտությունների, մասնավորապես, ընտրություն կատարելու, որոշում կայացնելու, ուսումնառության գործընթացը կառավարելու կարողությունների զարգացմանը՝ դառնալով սեփական զարգացման և ինքնազարգացման սուբյեկտ, ինտերակտիվությանը, ստեղծագործականության, նախաձեռնողականության և երևակայության զարգացմանը նպաստող միջոց:

Մեդիամիջոցները փոխվում են նաև ուսուցչի ուսումնական գործունեության բովանդակությունը, ուսուցիչը դադարում է լինել գիտելիքի «վերարտադրող», դառնում է ուսուցման նոր տեխնոլոգիայի մշակող, որը մի կողմից մեծացնում է նրա ստեղծագործական գործունեությունը, մյուս կողմից՝ պահանջում է տեխնոլոգիական և մեթոդական պատրաստվածության բարձր մակարդակ, այսինքն՝ ՏՏ-ն կատարում է «միջնորդի» գործառույթ: Աշակերտներն այսպիսի միջավայրում կհաղթահարեն ուսումնական խնդիրները, կսովորեն քննադատաբար մտածել՝ ունենալով ուսուցիչ, ուսուցիչ-խորհրդատու, ուսուցիչ-աջակցող, ուսուցիչ-գործընկեր և ուսուցիչ-սովորող:

Մենք համոզվել ենք, որ մայրենիի դասի կազմակերպումը մեդիայի շնորհիվ զբավում է կրտսեր դպրոցականներին: Այդ տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է հաղորդակցական իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել «սեփական բառերով», հաճույքով են կատարում

ուսումնական առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Եվ դա բնական է ավելի զարգացնում է կրտսեր դպրոցականի կամային ուշադրությունը, որը հատկապես կենտրոնանում է, երբ նրան հետաքրքիր է, երբ ուսումնական նյութը տարբերվում է իր պարզությամբ, մատչելիությամբ պայծառությամբ, երբ աշակերտի մոտ դրական հույզեր է առաջացնում: SS-ի կիրառումը տարրական դպրոցում, աշակերտին հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում:

Ժամանակակից ուսուցիչների մեծ մասը նախընտրում է կիրառել առնվազն մեկ համակարգիչ և մուլտիմեդիա դասավանդման գործընթացի պատկերացումը առավելագույնի հասցնելու համար: Մուլտիմեդիա տեխնոլոգիաներ կիրառելիս աշակերտները գիտելիքները ձեռք են բերվում ընկալման տարբեր եղանակներով (տեսողական, լսողական), որոնք նպաստում են ուսումնական նյութի ու ավելի լավ յուրացմանը և ավելի երկար ժամանակով հիշվելուն:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում համոզվել ենք, որ տարրական դպրոցում նպատակահարմար է կիրառել մուլտիմեդիա հետևյալ ձևերը.

**ա) պատրաստի ուսումնական նյութերի հավաքումը՝ ելնելով դասի թեմայից և նպատակներից:**

**բ) ուսուցչի կողմից մուլտիմեդիա ուսումնական նյութի ստեղծումը՝ ելնելով դասավանդվող առարկաների վերջնարդյունքներից:**

**գ) աշակերտների կողմից մուլտիմեդիա պարզագույն նախագծերի մշակումը՝ երեխաների մեդիագրագիտության մակարդակի և տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ և նախագծային մեթոդի օգտագործմամբ:** Դրանք կարող են ունենալ հետազոտական, ստեղծագործական, դերային, խաղային, տեղեկատվական, կիրառական, միջառարկայական բնույթ:



դ) տարրական դասարաններում կարելի է կիրառել նաև պարզ նախագծեր՝ դերային-խաղային, միջառարկայական-ստեղծագործական և այլ ձևերը<sup>1</sup>:

Մեղիադասերը նպաստում են հետևյալ դիդակտիկ խնդիրների լուծմանը, յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները, համակարգել ձեռք բերած գիտելիքները, ձևավորել ինքնակառավարման հմտություններ, ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ և այլն:

Կարևորում ենք նշել, որ մուլտիմեդիա դաս մշակելիս ուսուցիչը պետք է մտածի տեխնոլոգիական գործողությունների հաջորդականության, մեծ էկրանին տեղեկատվություն ներկայացնելու ձևերի և մեթոդների մասին՝ չմոռանալով որ սա դաս է, ինչը նշանակում է, որ դասի պլանը կազմվում է՝ ելնելով դրա նպատակներից: Ուսումնական նյութ ընտրելիս ուսուցիչները սովորաբար ն պահպանում են հիմնական դիդակտիկ սկզբունքները: Այս դեպքում համակարգիչը չի փոխարինում ուսուցչին, այլ միայն լրացնում է նրա աշխատանքը: Միանգամայն ակնհայտ է, որ դասի մուլտիմեդիա աջակցության աստիճանը և ժամանակը կարող են տարբեր լինել՝ մի քանի րոպեից մինչև ամբողջ դասաժամ:

Դասերի ընթացքում տեխնոլոգիաներ կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ. **անվտանգ շահագործումը, նպատակային և արդյունավետ կիրառումը:** Անհրաժեշտ է նաև, որ ուսուցիչը տեխնոլոգիաները տեղին կիրառի, ճիշտ ընտրի գործիքը և ճիշտ հաշվարկի ժամանակը: Այս պարամետրերից որևէ մեկի անուշադրության մատնումը կխանգարի ուսուցչին լիարժեք իրականացնել դասի ընթացքում իր առջև դրած ուսումնական նպատակները<sup>2</sup>:

Ներկայացնենք SS-ների կիրառման հիմնական առանձնահատկությունները, որոնք կնպաստեն դասի կիրառման ժամանակ բարենպաստ պայմանների ստեղծմանը և նյութի յուրացման բարձր մակարդակի ապահովմանը.

<sup>1</sup>ՏՄ և ԹԻՎՈԼԳJ մև Ա Օ, Գ ոԼԼJ սմիրյ մև Ջ Յ, Ասարյ մև Ա Մ, Պողոսյ մև Լ. Մ, Կարսաբոյ մև Լ. Չ, Ալսոյ մև Լ. Մ. ԼեդիսկրթուԼթյ ոԼևը սպորսկսմ դարոցուՄ, Ե, ԳիտուԼթյ ոԼև, 2019, Էջ 5:

<sup>2</sup> ՏՄ և Ասովժարյ մև Ա, և ոԼրիշներ, Եզվ.սջիատ, Էջ132:

- դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում,
- առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն,
- ուսումնական նյութի վերաբերյալ սահիկահանդեսի պատրաստում,
- պատրաստի ուսումնական ծրագրերի օգտագործում,
- ինքնակրթության նպատակով համակարգչային միջոցների հայթայթում և կիրառում,
- տեքստային առաջադրանքների մշակում,
- մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով

Անառարկելի է, որ դասագիրքն աշակերտի և ուսուցչի համար առավել ծանոթ և օգտակար գործիքն է, որը կարելի է թերթել, զգալ, հաղորդակցվել նրա հետ, ինչպես անձի հետ, բայց SS տեխնոլոգիաները ուսուցման լրացուցիչ հնարավորություններ են, հետևաբար SS և դասագիրք՝ մեկ ամբողջությունն է: SS-ի միջոցով ակտիվանում է տեղեկատվության և հաղորդակցության առարկայի միջավայրի սուբյեկտների միջև տեղեկատվական փոխազդեցությունը, որի արդյունքն է ուսուցման առավել արդյունավետ մոդելի ձևավորումը:

Դասն անցկացնել համակարգչի մոտ, նշանակում է ոչ մի բույե իգուր չանցկացնել և մի դասաժամին շատ գիտելիքներ ձեռք բերել : Այս դեպքում աշակերտն անմիջապես տեսնում է իր աշխատանքի արդյունքները՝ համակարգիչն ընդգծում է ուղղագրական, քերականական, խոսքային ու կետադրական սխալները և օգնում է աշակերտին՝ ընտրելու և ուղղելու դրանք. արդյունքում սովորողը տեսնում և վերլուծում է իր կատարած աշխատանքի արդյունավետությունը:

## ԳԼՈՒԽ 2

### 2.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ՀՀ տարրական դպրոցում

Տարրական դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակով է պայմանավորված անձի հետագա կրթությունը: Մա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել <sup>3</sup>:

Արդի տարրական դպրոցում օրըստօրե լայն կիրառում են ստանում ուսուցման SS և ուսումնական գործընթացի արդյունավետությանն ու աշակերտների հետաքրքրության բարձրացմանը նպաստող տարաբնույթ մեդիամիջոցները: Կրթության ոլորտի արդիականացման այս միտումներն առաջին հերթին պայմանավորված են ժամանակակից աշակերտների հետաքրքրությունների շրջանակի ընդլայնմամբ, ինչպես նաև դպրոցից դուրս նրանց բավարարման համար ստեղծված լայն հնարավորություններով. յուրաքանչյուր ընտանիք այսօր ունի համակարգիչ, երեխաների մեծ մասն առանց դժվարության օգտվում է պլանշետից, նոթբուքից, բջջային հեռախոսից և այլն: Այսպիսի պայմաններում դպրոցական ուսումնառությունը աշակերտի համար կդառնա ձանձրալի, ոչ դրդապատճառային, եթե ուսումնասիրվի միայն դասագրքում զետեղված տեղեկությունների միջոցով: Պատահական չէ, որ ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման գործընթացներում շարունակաբար ավելանում են մեդիամիջոցներից օգտվելուն նպատակաուղղված ուսումնական թեմաները: Ցավոք, ՀՀ դպրոցները, մասնավորապես հիմնական դպրոցի տարրական օղակը դեռևս անհրաժեշտ չափով ապահովված չեն համակարգչային դասարաններով, էլեկտրոնային գրատախտակներով, ինչպես նաև ոչ բոլոր ուսուցիչներն են մեթոդապես պատրաստ SS միջոցներով դասեր վարելուն: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարեցտարի ավելանում են մեդիամիջոցների օգտագործմամբ դասեր վարող ուսուցիչների թիվը, և, որն ավելի կարևոր է, ընդարձակվել է դրանց կարևորությունը գիտակցողների բանակը:

<sup>3</sup> <https://idfedorov.ru/exp/article=989>

Գիտակցելով «ամեն ինչ չափի մեջ է օգտակար» կարգախոսի կարևորությունը՝ մեդիամիջոցներից օգտվող ուսուցիչներն իրենց դասերի ժամանակ ձգտում են հաշվի առնել աշակերտների մտավոր, ֆիզիկական և հոգեկան առողջությունն ապահովող պահանջները: Մի բան անառարկելի է և ապացուցված. մեդիամիջոցների կիրառումը բարձրացնում է ուսումնառության դրդապատճառայնությունը, հիմնավոր և առավել կայուն գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման արդյունավետությունը, զարգացնում է սովորողների ստեղծագործական ակտիվությունը <sup>4</sup>:

Ժամանակակից ուսուցիչը պետք է հստակ հասկանա, որ երեխաները, որոնց ինքը պատրաստվում է սովորեցնել, ծնվել և դպրոց են եկել արդեն 21-րդ դարում, ինչը նշանակում է, որ նրանք մեծացել և ձևավորվել են բոլորովին այլ տեղեկատվական տարածքում <sup>5</sup>:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հատկապես բարձրացնում է ինքնակրթության արդյունավետությունը, քանի որ (էլեկտրոնային) սկզբունքով գրի առնված տեղեկատվության հետ աշխատելիս շատ հեշտ է կազմակերպել անհրաժեշտ տվյալների ավտոմատ որոնում <sup>6</sup>:

Ուսուցիչը պետք է համակերպվի՝ գիտակցելով, որ ինքն այլևս գիտելիքի միակ և գլխավոր աղբյուրը չէ. նա ունի հզոր մրցակից՝ ի դեմս համակարգչի, համացանցի<sup>7</sup>: Տարրական դպրոցում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները օգտագործվում են ուսումնական նյութն առավել գրավիչ և դյուրըմբռնելի ներկայացնելու համար<sup>8</sup>: ՏՏ-ների օգտագործումը էական ազդեցություն ունի ուսուցման բովանդակության, ձևերի և մեթոդների վրա<sup>9</sup>:

<sup>4</sup> Թվու.զյ ան Ա Օ, Գ ուլ ամիոյ ան Ջ Զ., Ասարյ ան Ա Մ, Պողոսյ ան Լ. Մ, Կարապետյ ան Լ. Չ., Ախաչյ ան Լ. Մ. Լեդիակրթութի ունը տարրական դպրոցում, Ե., «Գիտութի ուն»2019, Էջ 67:

<sup>5</sup><https://monster-evo.ru/belinskij/cto-takoe-ikt-v-obrazovaniisovremennyinformacionnokommunikativnyh-tehnologii-i-trebovaniya/>

<sup>6</sup> Աստվածարյ ան Ա. Լ. ուրիշներ, Նշվ. սջիատ, Էջ 62:

<sup>7</sup> Թվու.զյ ան Ա Օ, Գ ուլ ամիոյ ան Ջ Լ. ուրիշներ, Նշվ. սջիատ, Էջ 6-8:

<sup>8</sup> Զանրակրթութի ան սխոական կրթակարգ, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829>

<sup>9</sup> Киселев Г.М., Бочкова Р.В., Информационные технологии в педагогическом образовании, М., 2014, с.8:

Աշակերտների առաջադիմությունը կարող է մեծապես շահել, երբ ուսուցման ու ուսումնառության գործընթացում տեխնոլոգիաների կիրառումը դառնա կանոն՝ ոչ թե բացառություն<sup>10</sup>:

Գիտնականները տարրական դպրոցում կիրառվող S2S-ի միջոցները բաժանում են չորս խմբի.

**1.Տեղեկատվական գործիքներ:** Դա հավելված է, որը տեղեկույթը մատուցում է տարբեր չափսերով, ասենք՝ տեքստ, ձայն, գրաֆիկ, վիդեո, մուլտիմեդիական հանրագիտարան կամ համացանցային ռեսուրսներ:

**2.Հետազոտական գործիքներ:** Դրանք համակարգեր են, որոնք օգնում են սովորողներին ուսումնասիրել շրջակա միջավայրը, կիրառել ստացած գիտելիքները:Նման համակարգերն ընդգրկում են մոդելավորումը, դիդակտիկ խաղերը և վիրտուալ իրականությունը:


**3.Կառուցողական գործիքներ:** Դրանք այն գործիքներն են,որոնք կարող են օգտագործվել գաղափարների իրացման և մտքերի ներկայացման միջոցով՝ տեղեկատվությունը կառավարելու համար:

**4. Հաղորդակցական գործիքներ:** Դրանք հավելվածներ են, որոնք հեշտացնում են ուսուցչի և աշակերտի միջև կապը տարածության, ժամանակի մեջ՝ դասարանում: Ասենք, էլեկտրոնային փոստը, տեսակապը, ֆորում: Ի հավելումն այս չորս տիպերի՝ S2S-ը կարող են կատարել նաև այլ՝ դերեր, մասնավորապես, ուսումնական և ախտորոշիչ գործիքների դերեր <sup>11</sup>:

<sup>10</sup> [https://lib.amedu.am/category/125/date\\_created/desc/offset/5](https://lib.amedu.am/category/125/date_created/desc/offset/5)

<sup>11</sup> Տ՝ ս ԹՎՈւԳՅ մս Ա Օ,Գ ուլ ամիրյ մս Ջ և ու ռիշներ, ևշվ.սջխատ, էջ 166-167:

## Տարրական դպրոցում կիրառվող SRS միջոցները միջոցները



Հայտնի է, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները մասնավորապես կիրառվում են ուսումնական նյութի պարզաբանման, լրացուցիչ տեղեկույթի ցուցադրման, դասագործընթացի հետաքրքրության և արդյունավետության բարձրացման նպատակով: Համակարգչի միջոցով կարելի է ներկայացնել նաև ձայնային և տեսագրված հատվածներ: SS-ների օգտագործման նպատակները.

- ✓ բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/, մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- ✓ նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը,
- ✓ արագ և որակյալ պատրաստվել դասին, պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը, օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց:

Ուսուցիչն իր գործունեության ողջ ընթացքում դառնում է սովորողի գործընկերը: Մեծ ուշադրություն էմ դարձնում աշակերտների առողջությանը, ներառում ֆիզիկական և դինամիկ դադարներ, աչքերի հանգստացնող մարզանք:

SS-ների օգտագործման հնարավորությունների շրջանակը բավականին լայն է:

Ուսումնական գործընթացի կազմակերպումը տարրական դասարաններում առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող յուրացման համար: SS միջոցները գործում են որպես ուսումնական գործընթացի օժանդակ տարր, այլ ոչ հիմնական: SS-ների հետ աշխատանքը պետք է հստակ

մտածված և չափավորված լինի և կիրառումը դասին պետք է կրի նուրբ բնույթ: Ուսուցիչը դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի ՏՏ-ների կիրառման նպատակի, տեղի և ձևի մասին<sup>12</sup>:

ՏՏՏ-ի կիրառումը տարրական դպրոցի դասագործընթացում հնարավորություն է տալիս ակտիվացնել սովորողների ճանաչողական գործունեությունը, ձևավորել ուղղորդված ընկալում, բարձրացնում է կրթության որակը և հասանելիությունը<sup>13</sup>:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասի ուսումնասիրման գործընթացում թույլ է տալիս խոսել մի շարք առավելությունների մասին. **սովորողների ինքնուրույն աշխատանքի սկզբունքայնորեն նոր ձևի կազմակերպումը, ուսուցման գործընթացի ակտիվացումը, ուսումնական նյութերի հասանելիությունը, իմացական գործունեության նոր, խթանող միջոցների ստեղծում և այլն<sup>14</sup>:**

Դասերի ժամանակ համացանցային տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժի կարևորագույն խնդիրներից է (աշակերտին ինքնուրույն որոնողական աշխատանքի մղելը, տեղեկույթի մշակման և նոր տեղեկատվության ճիշտ ընկալման համար պայմանների ստեղծումը)<sup>15</sup>:

Տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը նոր պահանջներ առաջադրեց արդի ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, աշակերտը դարձավ ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցը, իսկ ուսուցիչն սկսեց հանդես գալ որպես աջակից, խորհրդատու, խրախուսող և նախաձեռնող ղեկավար: Այս ճանապարհով ՏՏ-ները ուսումնական բարձրացրին գործընթացի արդյունավետությունը:

<sup>12</sup> <https://idfedorov.ru/exp/article=989>

<sup>13</sup> ՏԷ՝ և ԹՎՈՒՎՅՆ ԱՆ Ա Օ,Գ ուՄ ամիոյ սն Ջ և ու ռիժներ, Նշվ. սջիատ, էջ 166:

<sup>14</sup> Киселев Г.М., Бочкова Р.В., Информационные технологии в педагогическом образовании, М., 2014, с. 68:

<sup>15</sup> ՏԷ՝ և ԹՎՈՒՎՅՆ ԱՆ Ա Օ,Գ ուՄ ամիոյ սն Ջ և ու ռիժներ, Նշվ. սջիատ, էջ 169:

Մեր մանկավարժական պրակտիկաների և հատուկ ուսումնասիրությունների ընթացքում հանգեցինք այն եզրակացության, որ ուսուցման արդյունավետ մեթոդներից են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ անցկացվող **դիդակտիկական խաղերը**: Դրանց միջոցով աշակերտները համակարգիչն ու համացանցը սկսում են դիտարկել որպես ուսուցման աղբյուր և ոչ թե զվարճանքի պարագա կամ ազատ ժամանակի կազմակերպման միջոց:

SS-ները ոչ միայն ստեղծում են կրթական գործընթացի փոփոխականության, անհատականացման և տարբերակման հնարավորություններ, այլ նաև թույլ են տալիս ուսման բոլոր առարկաների փոխազդեցությունը կազմակերպել նոր ձևով, կառուցել կրթական համակարգ, որում աշակերտը կրթական գործունեության ակտիվ և հավասար մասնակիցը է կլինի:

Մեդիադասերը նպաստում են հետևյալ դիդակտիկ խնդիրների լուծմանը, յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները, համակարգել ձեռք բերած գիտելիքները, ձևավորել ինքնակառավարման հմտություններ, ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ և այլն:



## 2.2 ՏՀՏ-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները

ՏՀՏ-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի

- դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում /առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/
- ուսումնական նյութի վերաբերյալ պրեզենտացիայի /շնորհանդես/ ստեղծում պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում
- դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում
- կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում
- տեքստային աշխատանքների ստեղծում
- մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով:

ՏՀՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ: Դասի անցկացումը մեդիայի շնորհիվ զրավում է կրտսեր դպրոցականներին: Այդ տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

Կրտսեր դպրոցականի մոտ ավելի զարգացած է կամային ուշադրությունը, որը հատկապես կենտրոնանում է, երբ նրան հետաքրքիր է, երբ ուսումնական նյութը

տարբերվում է պարզությամբ, պայծառությամբ, երբ սովորողի մոտ դրական հույզեր է առաջացնում:

**SՀS-ի օգտագործումը դասի տարբեր փուլերում.**

- սովորողների նախապատրաստում նոր նյութի յուրացմանը
- նոր նյութի յուրացում, մատուցում
- նոր նյութի ամրապնդում
- դասի ամփոփում
- տնային առաջադրանք

**Մեղիադասերը օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները.**

- յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները
- համակարգել ձեռք բերած գիտելիքները
- ձևավորել ինքնակառավարման հմտություններ
- ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ
- ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել սովորողներին՝ ուսումնական նյութի ստեղծման ինքնուրույն աշխատանքում:

նյութի ստեղծման ինքնուրույն աշխատանքում:

Դպրոցում ուսումնական պրոցեսի կազմակերպման փորձը SՀS-ների օգտագործմամբ նկարագրված մոդելով թույլ է տալիս խոսել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման այլ միջոցների համադրման արդյունավետության բարձր մակարդակի մասին, որը ենթադրում է իմացություն գործունեության միջոցով: Այն սովորողների ուսուցման կազմակերպական ձևերի, բովանդակության, մեթոդների փոփոխման երկար և շարունակական պրոցես է, ա՛յն սովորողների, ովքեր ապրելու և աշխատելու են անսահմանափակ ինֆորմացիայի մուտքի պայմաններում:

Այսպիսով, մեղիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման պրոցեսը, թույլ են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ, նաև նպաստում են սովորողի ստեղծագործական զարգացմանը:

## Մայրենիի դասերի ընթացքում SS-ի կիրառումը

Ուսուցիչ Ս ո ն ա Բ ա դ դ ա ս ա ր յ ա ն Ամսաթիվ

27.09.2023 թիվ

Առարկան – Մայրենի		
Դասարան ը -II	Ուստարի -2023թ	
Թեման	Ով ենք մենք	Կիսամյակը - I
Ենթաթեման	Ընկերները	
Դասի տիպը	Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս	
Դասի նպատակը	<p>Ամրակայել հաղորդակցական և համագործակցային կարողությունները</p> <p>Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը</p> <p>Զարգացնել կարդալու և գրելու կարողությունները</p> <p>Ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները</p> <p>Դասի նպատակների ձևակերպման հիմք են հանդիսանում ՀՊԶ-ով սահմանված հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝</p> <p>1.Գիտելիք</p> <p>Առարկաների, երևույթների, օբյեկտների, առնչությունների վերաբերյալ փաստեր, արժանահավատ տեղեկություններ, տեսական դրույթներ, դրանց բացահայտման և կիրառման եղանակներ</p> <p>2.Հմտություններ</p> <p>Անձի այն որակներն են, որոնք հնարավորություն են տալիս կատարելու նպատակին ուղղված արդյունավետ գործողություններ</p> <p>3.Դիրքորոշում</p> <p>Որևէ երևույթի կամ գաղափարի կատմամբ անձի կողմից ցուցաբերվող այն</p>	

	<p>արձագանքն է, որը կարող է ներգործել նրա մոտիվացիայի և գործելակերպի դրսևորման ձևի վրա</p> <p>4. Արժեք</p> <p>Արժեք են ներկայացնում որոշակի առարկաներ և երևույթներ՝ իրենց հասարակական մշակութային նշանակությամբ, դրանք իմաստավորվում և գնահատվում են որպես բարիք, հարստություն և արտահայտվում են գեղեցիկի, բարու, արդարի, ճշմարիտի և այլ հատկանիշներով</p>
Վերջնարդյունքները	<p>Մտքերն արտահայտի պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային:</p> <p>Ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին:</p> <p>Հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում:</p> <p>Ընթերցի ոչ գրական պարզ տեքստեր տեղեկատվություն ձեռք բերելու և ժամանցի համար, խոսի ընթերցածի բովանդակության մասին:</p> <p>Ճանաչի բառը որպես պատկերավորման միջոց:</p> <p>Համագործակցի ընկերների հետ՝ պահպանելով բարեվարքության և խմբային աշխատանքի սահմանված կանոնները:</p> <p>Միրի ինքն իրեն, իր ընտանիքը, հարգի ընկերներին, ուսուցիչներին, հոգատար վերաբերմունք դրսևորի մարդկանց և շրջակա միջավայրի նկատմամբ:</p> <p>Արժևորի մայրենի լեզվի դերը իր կյանքում, հաղորդակցվելիս պահպանի ուղղախոսական կանոնները:</p> <p>Կարևորի բարությունը, կատարի հանրօգուտ աշխատանք:</p>

<p>Ընդհանրական խաչվող հասկացությունները</p>	<p>Օրինաչափություններ</p> <p>Որոշակի սկզբունքով կրկնվող երևույթներ բնության և հասարակության մեջ:</p> <p>Անհատ և հարաբերություններ</p> <p>Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, Պարտականությունների ստանձնում և իրավունքների իրացում: Ժամանակ և տարածություն.</p> <p>Որտե՞ղ և ե՞րբ տարբեր մարդկանց կենցաղը, անձնական պատմությունները, ձեռքբերումները, դերը որոշակի ժամանակաշրջանում վայրում:</p> <p>Անհատական և մշակութային արժեհամակարգ.</p> <p>Անհատ – հասարակություն փոխկախվածությունը, մարդու ստեղծած արժեքների ազդեցությունը:</p>
---	--

Առաջարկվող գործունեության ձևեր	<p>Պատմել իր, իր ընտանիքի կյանքի ու սովորությունների մասին, արտահայտել վերաբերմունք ընտանեկան ավանդույթների վերաբերյալ՝ ցանկության դեպքում օգտագործելով ընտանեկան այբումից լուսանկարներ, տեսաձայնագրություններ:</p> <p>2. Ներկայացնել իր և մյուսների, ինչպես նաև տարբեր մարդկանց միջև առկա նմանություններն ու տարբերությունները, խոսել մարդկանց առանձնահատկությունների մասին:</p> <p>3. Նկարագրել իր բնակավայրը, վերլուծել առկա խնդիրներն ու մտածել դրանց լուծման ուղիների մասին՝ կազմակերպելով խմբային քննարկումներ:</p> <p>4.Արտահայտել մտքերն ու զգացումները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ:</p> <p>Խաղալ լեզվական խաղեր ստեղծել և լուծել գլուխկոտրուկներ,</p>
Միջառարկայական կապերը	<p>Մանկական և գիտահանրամատչելի գրականություն.</p> <p>Բանաստեղծությունների , հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում ընթերցում, աշխատանք ոչ ծավալուն գիտահանրամատչելի տեքստերի շուրջ:</p> <p>Ես և շրջակա աշխարհը.</p> <p>Բնության երևույթների, Երկիր մոլորակի առանձնահատկությունների, կենդանական և բուսական աշխարհի ուսումնասիրում, մարդկանց կյանքի/գործողությունների և մոլորակի փոխազդեցության վերլուծում, սեփական վարքի ու վերաբերմունքի փոփոխություն՝ հանուն անվտանգ կենսագործունեության:</p>
Ուժ-Չ/Ուսումնառության համընդհանուր ձևավորում/	<p>1.կյուրի ներկայացման բազմազանություն,</p> <p>2.գիտելիքի արտահայտման բազմազանություն,</p> <p>3.ներգրավման ձևերի բազմազանություն:</p>
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	<p>Դասագիրք՝ Մայրենի</p> <p>Համակարգիչ, Գունավոր մատիտներ, գրիչ, տետր, թղթեր</p>
Մեթոդներ	<p>Մտագրոհ, ելքի քարտի լրացում-3,2,1, մեթոդ, դադարներով ընթերցանություն</p>
Գնահատում	<p>Ձևավորող գնահատում</p> <p>3,2,1 մեթոդով</p>

## Դասի ընթացքը

Դասի փուլերը	Փուլի խնդիրները	Ուսուցչի գործողությունները	Աշակերտի գործողությունները
Կազմակերպչական մաս /1-2 րոպե/	Նախապատրաստվել դասին	Աշակերտների և ուսուցչի փոխադարձ ողջույն, բացականչի ամրագրում: Այնուհետև աշակերտներին բաժանում է թերթիկներ: (Բաշխիչ նյութ 1)	Աշակերտները նույնպես պատրաստվում են և պատասխանում են հարցերին: Աշակերտները ստանում են թերթիկներ:
Խթանման փուլ	Կլրացնեն հարցաթերթիկը	Ուսուցիչը հարցերով դիմում է դասարանին՝ Երեխանե՛ր, ո՞վ ինչ է սիրում : Իսկ կա՞ն բաներ, որ չեք սիրում : Ինչը՞ :	Մասնակցում են հարց ու պատասխանին և լրացնում թերթիկը:
Իմաստի ընկալման փուլ	Օգնել, որ աշակերտները գիտակցեն ընկերության էությունը:	Դասագրքի դասի ընթերցում : Աշակերտների հետաքրքրությունը խթանելու համար կարդալ հանելուկներ ,որոնց պատասխանները աշակերտները պետք է գուշակեն : Պատասխանները կգրեն թերթիկների վրա և կվանկատեն: Թեմայի ամրապնդման համար, ուսուցիչը առաջարկում է համակարգչով խաղալ հետաքրքիր խաղեր:	Աշակերտները լսում են ,պատասխանում ուղղորդող հարցերի, կատարում եզրահանգումներ, դատողու- թյուններ:



Կշռադատման փուլ	Թեմայի յուրացում ամրապնդման համար իրավիճակների ստեղծում:	Համակարգչով միացնել մուլտֆիլմ ընկերության մասին՝ Ով է քո ընկերը: <a href="https://www.youtube.com/watch?v=yavdXvosw7M">https://www.youtube.com/watch?v=yavdXvosw7M</a>	
Անդրադարձ	Անդրադարձ դասի բոլոր փուլերով:	Անդրադարձ է կատարում դասի բոլոր փուլերին՝ զար- գացնելով հիշողությունը, ուշադրությունը:	Մեկ անգամ ևս անցնում են դասի բոլոր փուլերով, հիշում , ամրապնդում:
Գնահատում	3,2,1 մեթոդով	Կրճատման էլքի քարտեր:	Պետք է՝ գրեն Գրեն երեք բան, որ սովորեցին այդ դասի ընթացքում: Երկու բան, որ շատ կարևոր և արդյունավետ են համարվում, Մեկ բան, որ վաղն անմիջապես կկիրառեն



Բաշխիչ նյութ 1

Ես սիրում եմ

Չեմ սիրում



## Բաշխիչ նյութ 2

1. Ինչն է զարդարվում

Տարվա մեջ մի օր,

Թեև աշխարհում

Զարդ է փառավոր: **/Եղևնի/**

2. Նրա գլխին ծառի մեծ ճյուղեր կան,

Նա ամբողջ օրը թափառում է ուղիներով ... **/Եղջերու/**

3. Կարմիր, հյութալի, բուրավետ,

Աճում է ցածր, գետնին մոտ: **/Ելակ/**

4. Ի՞նչ է վրան է կապույտ ու լայն,

Հազար-հազար կանթեղ վրան,

Զարմանալին այն է միայն,

Որ չունի սյուն ու հենարան: **/Երկինք /**

### Բաշխիչ նյութ 3

#### Խաղ 1

Նպատակը-Բառի մեջ հնչյունների, տառերի քանակի որոշման կարողության ամրապնդում, գիտելիքների ամրակայում, բառապաշարի հարստացում:

Խաղի ընթացքը- Էկրանին տրված է երկինք բառը, պետք է որոշեն տառերի և հնչյունների քանակը:

<https://vachagan.am/mayreni-2/>



#### Խաղ 2

Նպատակը-Նախադասության ճիշտ դասավորվածություն: Ասացվածքների ամրապնդում:

Խաղի ընթացքը: Իրար միացնել նախադասությունների սկիզբն ու ավարտը:

<https://vachagan.am/oroshe%09bq-ew-irar-miacre%09bq-naxadasutyunneri-skizbn-u-avarty/>



**Խաղ 3**

**Խաղի նպատակները.** Վանկ թեմայի վերաբերյալ ունեցած գիտելիքների ամրակայում, բառապաշարի հարստացում:

**Խաղի ընթացքը.** Էկրանին հայտնվում են տարբեր բառեր և վանկերի քանակին համապատասխան թիվ: Աշակերտները բառերը տեղադրում են համապատասխան թվերի ներքո և հետո ստուգում: Ճիշտ պատասխանի դեպքում բառը ստանում է կանաչ, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ կարմիր գույնը:

Այս վարժությունը մենք կատարել ենք խթանման փուլում:



Բաշխիչ նյութ 4

Ելքի քարտ

Գրեն երեք բան, որ  
սովորեցին այդ  
դասի  
ընթացքում

Երկու բան, որ  
շատ  
կարևոր և  
արդյունավետ  
են համարվում,

Մեկ բան, որ  
վաղն անմիջապես  
կկիրառեն

Այսպիսով՝ իրականացնելով այս էլեկտրոնային վարժությունները՝ մենք համոզվեցինք, որ լեզվական տարրական գիտելիքները ամրապնդվում են հետաքրքրաշարժ վարժությունների իրականացման ճանապարհով: Այս վարժությունների կատարելու ժամանակ պատկերավոր են յուրացնում լեզվական տարրական գիտելիքները: Այս էլեկտրոնային վարժությունները նպաստեցին, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա յուրացնել տարրական լեզվական գիտելիքներ: Մեր կազմած հետաքրքրաշարժ վարժությունների միջոցով մենք աշակերտների մեջ կարողացանք ձևավորել տարրական լեզվական գիտելիքները յուրացման կարողություններ:

Տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման ընթացքում տալիս են մեծ հնարավորություններ և հրաշալի արդյունքի գրավական են: Աշակերտը անընդհատ պետք է տեսնի նոր նյութին առնչվող ամեն բան (դիդակտիկ նյութեր կամ էլեկտրոնային դիդակտիկա): Էլեկտրոնային ռեսուրսների ճիշտ կառավարման դեպքում կարելի է ունենալ նվազագույն ժամանակի կորուստ և առավելագույն արդյունք: Սա իր հերթին է դառնում ավելի լավ սովորելու, դրդապատճառ: Ճիշտ հակառակը կստացվի սխալ կառավարման դեպքում: Մեր կարծիքով՝ սովորողների լեզվական կարողությունների զարգացմանը առավել արդյունավետ կարող են նպաստել հետաքրքրաշարժ վարժությունները, ուսումնական խաղերը, քանի որ դրանք մեծ խթան են ոչ միայն լեզվական կարողությունների, այլև սովորողի իմացական ոլորտի զարգացման համար:

SS միջոցները անշուշտ, ավելի մեծ հետաքրքրություն կառաջացնեն ուսումնասիրվող նյութի նկատմամբ, որն էլ կնպաստի՝ աշակերտների ակտիվ մասնակցությանը, ազատ արտահայտվելուն, քննարկումներ անցկացնելուն և այլն:

21-րդ դարը տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջան է, իհարկե, դրանց կիրառումը չափի մեջ պետք է լինի, որպեսզի չշեղի և չվնասի երեխաներին, քանի որ երեխաների մտածողությունը տեսողական է, ապա շատ արդյունավետ է կիրառել այն: Այս տեսքի բարձրացնում է ուսուցման որակը, խթանում է սովորողների հետաքրքրությունը, զարգացնում է ուշադրությունը, սերը դեպի լեզվական տարրական գիտելիքները, բարձրացնում նյութի յուրացման

արդյունավետությունը, նպաստում նյութի գեղեցիկ, տեսանելի, գունեղ, հասկանալի ու մատչելի մատուցմանը, նյութը կյուրացվի և աշակերտների մեջ կտպավորվի առավել հեշտությամբ, հետաքրքիր եղանակներով պատրաստված դասի ընթացքում երեխաների ուշադրությունը և կենտրոնացվածության աստիճանը առավել բարձր է լինում և դարձնում այն արդյունավետ:

Մեզ հետաքրքրում էր նաև, թե **ուսուցիչներն և աշակերտները** ինչ դժվարությունների են **ունենում SS միջոցները կիրառելիս**: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

Ուսուցչի դժվարությունները	Աշակերտի դժվարությունները
<p>Մեղիագրագիտության պակաս: Դպրոցներում տեխնիկական միջոցների՝ համակազմի, պրոյեկտորի և այլնի բացակայություն: Չունեն դասի ժամանակ ճիշտ բաշխելու տեխնիկա: Համակարգչի բացակայություն դասենյակում պայմանների բացակայություն : SS –ՈՎ աշխատանքի ժամանակ չեն կենտրոնանում ԿԱՊԿՈԻ աշակերտները անուշադրության են մատնվում: Դրանք պարզապես ժամանակի վատնում են SS-ի անբավարար քանակը, Սոցիալմանկավարժական դժվարությունները,</p>	<p>Մոռանում են անցած լեզվական նյութը: Չեն կարողանում կատարել էլեկտրոնային առաջադրանքներ Շփոթում են և մոռանում են լեզվական գիտելիքները Անուշադիր են լսում ուսուցչին և ընկերներին SS կիրառման ժամանակ Ցրվածություն և անուշադրություն է առաջացնում : Ոչ բոլոր են ներգրավված լինում դասերին Առաջացնում է անուշադրություն, ցրվածություն և դժվարություններ Սովորողների կախվածությունը և այլն:</p>

Աղյուսակ 1

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատելով տվյալ թեմայի շուրջ կարող ենք ասել, որ չնայած տարատեսակ խնդիրների, մենք չենք կարող ապրել մեր օրերում, խուսափելով նորագույն տեխնոլոգիաների կիրառումից: Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները սերտորեն առնչվում են բոլոր առարկաների դասավանդմանը: ՏՀՏ-ի օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան օժանդակող գնահատող գործընկեր:

ՏՀՏ-ների արդյունավետ կիրառումը պայմանավորված է մի շարք հանգամանքներից: Դրանք են՝ մանկավարժների ՏՀՏ-ների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տիրապետման ցածր մակարդակը, նյութատեխնիկական բազայի սակավությունը և այլն:

Այսօր մեզնից պահանջվում է քայլել ժամանակին համահունչ, որպեսզի կարողանանք հասցնել ապրել կյանքի հունով, սակայն պետք է չմոռանալ, որ չի կարելի գայթակղությանը տրվել և մոռանալ մեզ վաղուց հայտնի «ավանդական» մեթոդները: Պետք է կարողանաք համատեղել արդեն երկար տարիների փորձ ունեցող դաստիարակության մեթոդները, ժամանակակից մարտահրավերների, տեխնոլոգիաների և ստանդարտների հետ:

Ելնելով հետազոտության արդյունքներից, եկա այն եզրակացության, որ պետք է ապահովել դպրոցները նորագույն ՏՀՏ-ը գործիքներով, հաճախակի կազմակերպել վերապատրաստումներ, քննարկումներ, փորձի փոխանակում և այլն: Ուսուցչին տալ հնարավորություն նոր գիտելիքներն ու կարողություններն կիրառել դասապրոցեսին, դասը դարձնելով էլ ավելի գեղեցիկ և հասանելի սովորողների համար:

ՏՏ-ների ներդրումը կրթական գործընթացում անառարկելիորեն ակտիվացնում է ուսումնառության գործընթացը, բարձրացնում դասի արդյունավետությունը, սակայն առկա են մի շարք խնդիրներ. ՏՏ-ի անբավարար քանակը, սոցիալմանկավարժական դժվարությունները, սովորողների կախվածությունը և այլն: Ամփոփելով հետազոտության արդյունքները կարելի է ասել, որ ՏՏ ունի մեծ ներուժ և որպես այդպիսին կարող է մեծ ներդրում ունենալ կրթության զարգացման գործում:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական հիմնական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք, ՄԱՍ 1 Վաչագան Ա. Սարգսյան, Ելենա Ջիլավյան, Քնարիկ Գալստյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Նունե Սարուխանյան ԵՐԵՎԱՆ «Քվանտ» վարժարան, 2023,
2. Հանրակրթական հիմնական դպրոցի 2-րդ դասարանի մեթոդական ուղեցույց Վաչագան Ա. Սարգսյան, Ելենա Ջիլավյան, Քնարիկ Գալստյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Նունե Սարուխանյան ԵՐԵՎԱՆ «Քվանտ» վարժարան, 2023,
3. Աստվածատրյան Ս., և ուրիշներ, Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Ե., Ասողիկ, 2004
4. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան , Զանգակ, 2018
5. Գյուլումյան Ս., Գալանտերյան Ա., Պողոսյան Մ., Տեղեկատվական համակարգեր և տեխնոլոգիաներ, Եր., ՀԱԱՀ, 2016
6. Թովուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. Հ., Ասատրյան Ս. Մ., Պողոսյան Լ. Մ., Կարապետյան Ն. Ջ., Ավագյան Լ. Մ., Մեդիակրթությունը տարրական դպրոցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., «Գիտություն», 2019
7. Թովուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. և ուրիշներ, Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., Մանկավարժ, 2018
8. Հակոբյան Ս., Մարտիրոսյան Ն., ՏՏ-ների կիրառումը մասնագիտական հետազոտություններում, Մանկավարժական միտք, 2016, 3-4